10069789

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№01/10.2.3/4957-14
«14» 08 2014 թ

Ձեր № 15.1-07/0257-14
07-08-2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ջավադյան

Ի պատասխան Ձեր ս.թ. օգոստոսի 7-ի թիվ 15.1-07/0257-14 գրության՝ կից տրամադրվում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մրցակցության բնագավառներում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Առդիր՝ 2 էջ:

Հարգանքով՝

ԿԱՐԵՆ ՃՇՄԱՐԻՏՅԱՆ

Կատարող՝ Լուսինե Վահրամյան
Գործարար միջավայրի բարելավման ու ՓՄՁ զարգացման վարչություն
597-134

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերով (այսուհետ՝ Նախագծեր) նախատեսվում է հեշտացնել օտարերկրյա մասնակիցների մուտքը ՀՀ արժեթղթերի շուկա, մասնավորապես՝ օտարերկրյա պահառուները կարող են Կենտրոնական դեպոզիտարիային տրամադրել ոչ թե իրենց մոտ հաշվառվող արժեթղթերի սեփականատերերի ցուցակը, այլ անվանատերերի վերաբերյալ տեղեկություններ:

Նախագծերով կարգավորվող շրջանակները առնչվում են արժեթղթերի շուկայի հետ, սակայն Նախագծերի ընդունմամբ նշված շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագիծը վերաբերում է *արժեթղթերի ոլորտին առնչվող որոշ հարցերի կարգավորմանը, մասնավորապես՝ պահառուների կողմից Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիային տրամադրվող տեղեկությունների հստակեցմանը* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում:***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ